Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի 9-րդ տարելիցին նվիրված միջոցառում Սպիտակում

Մարտի 11-ին դեսպան Յամադան մասնակցել է Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի տարելիցին նվիրված ամենամյա միջոցառմանը Սպիտակ քաղաքում՝ 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոնում, և ծաղիկներ խոնարհել տեղի կամավորների կողմից տեղադրված՝ Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերին նվիրված խաչքարին:

Այդ օրը արարողությանը ներկա են եղել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար պարոն Ցոլակյանը, Սպիտակ քաղաքից ընտրված Ազգային ժողովի պատգամավոր պարոն Պետրոսյանը, Լոռու մարզպետ պարոն Ղուկասյանը, Սպիտակի քաղաքապետ պարոն Սահակյանը, Սպիտակ քաղաքի փրկարարական ծառայության պետ, գնդապետ Գաբրիելյանը (հուշարձանի նախաձեռնող) և փրկարարական ծառայության աշխատակիցները, ինչպես նաև եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Օվսե քահանա Հովհաննիսյանը և բազմաթիվ քաղաքացիներ, ովքեր աղոթել են երկրաշարժի զոհերի և տուժած տարածքների վերականգնման համար:

Սպիտակի բնակիչների կողմից տեղադրված՝ Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժին նվիրված հուշարձան

Տեր Օվսե քահանա Հովհաննիսյանի աղոթքը երկրաշարժի զոհերի համար

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար պարոն Ցոլակյանը

Դեսպան Յամադայի ողջույնի խոսքը



Սպիտակի թիվ 8 դպրոցի ներկայացուցիչը (Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրեր. ջեռուցման համակարգի բարելավում)

Հուշարձանների հրապարակը

Գնդապետ Գաբրիելյանը (հուշարձանի նախաձեռնող), Լոռու մարզպետ պարոն Ղուկասյանը, դեսպան Յամադան, ԱԻ նախարար պարոն Ցոլակյանը, ԱԺ պատգամավոր պարոն Պետրոսյանը

Փրկարարական ծառայության աշխատակիցների ողջույնը

Սպիտակի 1988թ.-ի երկրաշարժին նվիրված հուշարձան